ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 սեպտեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

134
(2800)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՀԱՅՏ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ

Հոկտեմբերի 10-ին նախատեսված է Երեւանի նորընտիր ավագանու առաջին նիստը, որի ընթացքում պետք է ընտրվի Երեւանի նոր քաղաքապետ, քանի որ որեւէ ուժ չի ստացել 50%+1 ձայն: Նշենք, որ, ըստ Ընտրական օրենսգրքի, եթե որեւէ կուսակցություն չի ստանում ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա քաղաքապետն ընտրվում է բաց քվեարկության միջոցով: Այդ դեպքում ավագանու լիազորությունները ստանձնելու պահից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, ավագանին պետք է ընտրի քաղաքապետ: Ըստ օրենքի՝ եթե առաջադրվել է մեկից ավելի թեկնածու, քաղաքապետ է ընտրվում այն թեկնածուն, որը ստանում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Եթե ավագանին չկարողանա երկշաբաթյա ժամկետում համաձայնության գալ ու չընտրի քաղաքապետ, ըստ ԿԸՀ նախագահի, կառավարությունը երկշաբաթյա ժամկետը լրանալուց հետո պետք է ավագանու արտահերթ ընտրություններ նշանակի: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց «Հանրապետություն» կուսակցության անդամ Անի Խաչատրյանի հետ՝ պարզելու, թե ինչ դիրքորոշում ունեն նրանք, եւ արդյոք կառաջադրեն Արտակ Ջեյնալյանի թեկնածությունը: «Նման իրավիճակում մեր կուսակցությունը համենայնդեպս մոտակա մեկ շաբաթը չի կարող որեւէ հայտարարություն անել, քանի որ այդ մասով որեւէ քննարկում չունենք: Երբ գա հոկտեմբերի 10-ը, դրանից 1-2 օր առաջ կանենք քաղխորհրդի նիստ, կորոշենք»: «Ազգային առաջընթաց» կուսակցությունն իր առաջին դեմքի՝ Հայկ Մարությանի հետ գտնվում է ընդհատակում՝ որեւէ կերպ չարձագանքելով զանգերին: Նույն իրավիճակում է նաեւ «Մայր Հայաստան» դաշինքի ղեկավար Անդրանիկ Թեւանյանը, սակայն հրապարակային ելույթներում, կարծես թե, նրա դիրքորոշումը՝ իշխող քաղաքական ուժի հետ կապված, պարզ է. հավելյալ մանրամասներ նրանց կողմից հայտնի չէ: «Հանրային ձայն» կուսակցությունից Տիգրան Ուլիխանյանը հրաժարվեց որեւէ կերպ մեկնաբանել: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը եւս շարունակում է լռելյայն ապրել. նրանց էլ, կարծես թե, այս իրավիճակը ձեռնտու է: Թե ինչ ճակատագիր կունենա Երեւանը, դեռեւս մնում է անհայտ. անհայտությունը կարծես դուր է գալիս նաեւ ավագանու անդամներին:



Կնյազ Հասանով անունով ԱԺ պատգամավոր կա ՀՀ Ազգային ժողովում, որը ՀՀԿ ժամանակներից իշխանության մեջ գործում է, հանգիստ աշխատում՝ իբրեւ քուրդ ժողովրդի ներկայացուցիչ: Հասանովը, որ ապրում է Աբովյան քաղաքում, նաեւ Ազգային ժողովի բյուջեից բնակարանի վարձավճարի փոխհատուցում է ստանում: Հիշեցնենք, որ Կնյազ Հասանովը ԱԺ ամենաավագ պատգամավորն է, որը Հայաստանի քրդական համայնքի ղեկավարն է, «Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» հասարակական կազմակերպության նախագահը, սակայն երբեք կամ խիստ հազվադեպ է խորհրդարանի ամբիոնից կամ առհասարակ խոսել քրդական համայնքի խնդիրներից: Նա թոշակառուի կարգավիճակով մասնակցում է ԱԺ նիստերին, քվեարկում, ստանում իր ներկան, աշխատավարձը, պատգամավորի համար նախատեսված ներկայացուցչական գումարը՝ 250 հազար դրամը, եւ, դրանից բացի, նաեւ ստանում է փոհատուցում ԱԺ բյուջեից վարձով բնակվելու համար: «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ ԱԺ լրատվական ծառայությունից հայտնել են, որ Կնյազ Հասանովը, այո՛, 2019-ից մինչ օրս ստանում է բնակարանի վարձավճարի փոխհատուցում: Իրականում Կնյազ Հասանովը բնակվում է իր տանը՝ Աբովյան քաղաքում, որտեղից մայրաքաղաք Երեւան հասնելը ավելի հեշտ է եւ արագ, քան, օրինակ, Նոր-Նորքի 9-րդ զանգվածից կամ Երեւանի Հաղթանակ թաղամասից: Այս բարեխղճությամբ ՀՀԿ խմբակցությունից՝ «Իմ քայլը», ապա «Քաղաքացիական պայմանագիր» իշխանական խմբակցություններ տեղափոխված տարեց պատգամավորը աշխատում է ՀՀ-ում, ավելին՝ երիտասարդ խորհրդարանականների հետ քննարկում է հարցեր, թե ինչպես էին «նախկինները թալանում երկիրը»: Իրենք, սակայն, բյուջեն մսխում են անթաքույց, առանց վատ զգալու:



Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները սկսել են նիստեր գումարել: Հոկտեմբերի 3-ին գումարվելու են ԱԺ լիագումար նիստերը, եւ հանձնաժողովներում քննարկված նախագծերն արդեն կքննարկվեն այնտեղ: Այս նստաշրջանում թերեւս բուռն քննարկման է ենթարկվելու 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը վավերացնելու եւ, կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարությունն ընդունելու վերաբերյալ հարցը: Այս նախագծի հիմնական զեկուցողը լինելու է Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը: Նախագիծը մինչեւ լիագումար նիստում քննարկվելը կքննարկվի նաեւ ԱԺ պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովում: Այդ նույն նիստում մեկ այլ հետաքրքիր նախագիծ էլ է քննարկվելու, որով կառավարությունն առաջարկում է ընդունել, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի սպասարկման նպատակով տրամադրված հատուկ սարքավորված ինքնաթիռով եւ ուղղաթիռով չվերթների կազմակերպման, իրականացման եւ անվտանգության ապահովման, ինչպես նաեւ այդ սպասարկումից այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց օգտվելու կարգը սահմանվում է վարչապետի որոշմամբ: Այսինքն՝ այսուհետ վարչապետն է որոշելու այդ կարգն ու օգտվելու կանոնները: Մեկ այլ նախագծով էլ կառավարությունն առաջարկում է Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, Սնանկության դատարանի եւ Վարչական դատարանի դատավորներին տալ հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով: Այս որոշումը կգործի հաջորդ տարվա հունվարի 1-ից:

Իրավապահ համակարգում խառնաշփոթ է: Սեպտեմբերի 19-ից մայրաքաղաք Երեւանում բողոքի ակցիաները իրարանցում են ստեղծել իրավապահ համակարգում: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները այնքան են տարված եղել բողոքի ակցիաների ժամանակ բերման ենթարկված, կալանավորված անձանց գործերով, որ մոռացել են ընթացիկ քրեական գործերը, վերջին րոպեներին են մտել դատարաններ այլ գործերով անազատության մեջ գտնվող անձանց կալանքը երկարացնելու հարցով: Ավելին՝ որոշ դատարաններում անգամ դատական նիստերը չեն կայացել, քանի որ կալանավորներին չեն տարել դատարան՝ պատճառաբանելով, թե ուղեկցող ոստիկաններ չկան, քանի որ ոստիկանները տարված են եղել քաղաքացիներին բերման ենթարկելով, ժամանակ չի եղել կալանավորներով զբաղվելու:

ԶՐՈՒՅՑ

ՈՎ Ո՞ՒՄ ՕԳՏԻՆ ԿՔՎԵԱՐԿԻ

Սեպտեմբերի 17-ին տեղի ունեցած Երեւանի ավագանու ընտրություններից հետո փակուղային իրավիճակ է ստեղծվել: Ընտրության արդյունքներով անցողիկ շեմը հաղթահարել են 5 քաղաքական ուժ, սակայն նրանցից որեւէ մեկը 50 եւ ավելի տոկոս չի հավաքել, որպեսզի կարողանա միանձնյա քաղաքային իշխանություն ձեւավորել: Արդեն մեկ շաբաթ է՝ Երեւանը քաղաքապետ չունի: Անհրաժեշտ է լինելու կոալիցիաներ կազմել, կամ պետք է նոր արտահերթ ընտրություններ լինեն: Ըստ նախնական հաշվարկների՝ Երեւանի նորընտիր ավագանու առաջին նիստը տեղի կունենա հոկտեմբերի 10-ին: Այն կվարի ավագանու անդամներից ամենատարեցը, եւ անցողիկ շեմը հաղթահարած 5 ուժերը կընտրեն Երեւանի քաղաքապետ:

Հիշեցնենք, որ ԿԸՀ-ն երեկ ամփոփել է Երեւանի ավագանու ընտրությունների վերջնական արդյունքները: Ըստ այդմ՝ մանդատները բաշխվել են հետեւալ կերպ.

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն-24 մանդատ,

«Ազգային առաջընթաց» կուսակցություն-14 մանդատ,

«Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինք-12 մանդատ,

«Հանրապետություն» կուսակցություն-8 մանդատ,

«Հանրային ձայն» կուսակցություն-7 մանդատ:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել է Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի գլխավորած «Ազգային առաջընթաց» կուսակցության ընտրական ցուցակի երկրորդ համար Հայկ Գրիգորյանի հետ:

-Պարոն Գրիգորյան, ԿԸՀ-ն արդեն հրապարակել է ավագանու ընտրությունների վերջնական արդյունքները: Ըստ այդմ՝ ավագանի անցած ընդդիմադիր ուժերը միասին վերցրած ավելի շատ ձայներ ունեն, քան իշխանությունը, ուստի ընդդիմությունը կարող է քաղաքապետ ընտրել: Արդյոք այս հարցով սկսվե՞լ են բանակցությունները մյուս ուժերի հետ, ի՞նչ որոշում ունեք:

-Այդ բանակցությունները հրապարակային են եղել, ինչ-որ հատուկ քննարկում չի եղել, ամեն բան հրապարակային ֆորմատով է եղել: Մենք մի բան հայտարարել ենք, նրանք արձագանքել են: Ներքին քննարկումներ չեն եղել: Մենք հավատարիմ ենք մնալու մեր առաջարկներին մինչեւ վերջ՝ չհամագործակցել ՔՊ-ի հետ, ընդհուպ մինչեւ երկրորդ տարբերակը՝ չգնալ ու ավագանու առաջին նիստին քվորում չապահովել:

-Ընդդիմադիր ուժերը, ի պատասխան Հայկ Մարությանի երկու առաջարկների (նորընտիր ավագանու առաջին նիստին գալ ու իրեն ձայն տալ կամ էլ գնալ արտահերթ ընտրությունների), նախապայմաններ էին առաջ բերել: Քննարկե՞լ եք դրանք, համաձա՞յն եք այդ նախապայմանների հետ:

-Մենք ասում ենք, որ ընտրության արդյունքներում առավել ձայն ստացած ընդդիմադիր ուժին գան ու ձայն տան, իրենք էլ նախապայմաններ են առաջադրում: Դրանց շուրջ քննարկում կլինի, եւ կարձագանքենք, բայց դա չի դարձնում կոալիցիա: Նրանք, օրինակ, ասում են պաշտոններ. եթե նույնիսկ դրան էլ համաձայնենք, միեւնույնն է, չի դարձնում մեզ կոալիցիա:

-Հայկ Մարությանի հայտարարությունից հետո շատ քննադատություններ հնչեցին, որ իրավիճակը փակուղի եք մտցնում նման կատեգորիկ առաջարկներով, ինչի հետեւանքով ընդդիմությանը չի հաջողվում ընդհանուր հայտարարի գալ, եւ հնարավորություն եք տալիս իշխանություններին:

-Փակուղային վիճակ չկա: Մի ուժն ասել է, որ ձայն կտա մեր թեկնածուին, մյուս ուժն էլ ասել է՝ ձայն կտան, եթե վերահսկողական ապարատը տան իրենց. ուրիշ նախապայմանից ես տեղյակ չեմ: Մենք կատեգորիկ բան չենք ասում. ասում ենք, որ մեզ համար առաջնային է, որ չենք գնա համագործակցության ՔՊ-ի հետ: Եթե մենք թույլ տանք, որ ՔՊ-ն ընտրվի, դա էլ կլինի համագործակցություն: Մենք գտնում ենք, որ որեւէ ընդդիմադիր ուժ իր քայլով կամ անգործությամբ չպետք է հնարավորություն տա իշխող ուժին: Օրինակ՝ որ գնան ու ոչ մեկին ձայն չտան, այդպես էլ չպետք է լինի, որեւէ ընդդիմադիր ուժ իր անգործությամբ չպետք է նպաստի ՔՊ-ի ընտրվելուն:

-Այսինքն՝ հնարավո՞ր է զիջումների գնաք եւ ընդունեք ընդդիմադիր ուժերի նախապայմանները:

-Մենք որեւէ բան չենք ժխտել, մենք ուզում էինք հստակ իմանալ՝ որոնք են այդ վերահսկող գործառույթները: Դա հիմա քննարկում ենք ու առաջիկայում կարձագանքենք:

-Հոկտեմբերի 10-ին նոր ավագանին նիստ պետք է անի եւ քաղաքապետ ընտրի. կրկին առաջադրելո՞ւ եք Մարությանի թեկնածությունը:

-Այո՛, անպայման:

-Իսկ մյուս ուժերի հետ ի՞նչ համաձայնության եք եկել, պատրա՞ստ են գալ ու քվեարկել Հայկ Մարությանի թեկնածության օգտին:

-Որքանով ես տեղյակ եմ, «Մայր Հայաստանը» կգա եւ կքվեարկի, իսկ «Հանրային ձայնը» ձայն կտա մեր թեկնածուին, եթե վերահսկող գործառույթները տանք նրանց:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՒՂՂԱԹԻՌՈՎ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ավելի քան երկու օր Լեռնային Ղարաբաղից Լաչինի միջանցքով Հայաստան են տեղափոխվում բռնի տեղահանված քաղաքացիներ: Նրանց դիմավորում են Կոռնիձորում, որտեղ տեղակայված է վրանային կայան: Բնակիչներն այնտեղ ստանում են առաջին օգնություն, գրանցվում են, տեղի է ունենում առաջնային կարիքների գնահատում:

Այս ամենի հետեւանքով Կոռնիձոր-Գորիս ճանապարհահատվածը ծանրաբեռնված է, ոստիկաններն էլ ավտոշարասյուներն ուղեկցում են Գորիս:

Այնտեղ իր առաքելությունն է կատարում նաեւ ՀՀ առողջապահության նախարարությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՀ առողջապահության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից հայտնեցին, որ որեւէ փոփոխություն չկա տվյալներում, լինելու դեպքում հրապարակավ կտեղեկացնեն քաղաքացիներին:

«Բոլոր նախարարությունների մասշտաբով կարգավորվում է իրավիճակը. միայն Առողջապահության նախարարությունը չի այս ամենի էպիկենտրոնում: Հնարավոր բոլոր ուժերով արվում է հնարավոր ու անհնարին ամեն ինչ այս պահի համար»:

Հարցին, թե արդյոք սանավիացիայով կատարվում են այս պահին աշխատանքներ, նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապի բաժնից հայտնեցին, որ տեղյակ չեն եւ հավելյալ տեղեկության դեպքում անպայման կհայտնեն:

Չնայած քաղաքացիները բողոքում են դանդաղ իրականացվող աշխատանքներից նախարարության կողմից, այդուհանդերձ նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ շուրջօրյա մինչեւ այս պահը ամբողջ թիմով աշխատում են:

Հարցին, թե արդյոք բանակցություններ տարվում են, որպեսզի վիրավորները գոնե Քարվաճառի տարածքով տեղափոխվեն Հայաստան, քանի որ սեպտեմբերի 19-ից հետո վիրավորները անհամեմատ շատացել են, դրան էլ գումարվել է նաեւ բենզալցակայանի պայթյունը, սակայն նախարարությունից հայտնեցին, որ այդ ինֆորմացիային եւս չեն տիրապետում:

Հավելենք, որ որպեներ առաջ ՀՀ ԱՆ հաղորդագրություն տարածեց, որում ասվում է.

«Ուղղաթիռով բժիշկների թիմը անհրաժեշտ դեղորայքով եւ բժշկական պարագաներով այս պահին մեկնեց դեպի Ստեփանակերտ՝ օգնության հասնելու Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհի հարակից տարածքում՝ բենզինի պահեստում տեղի ունեցած պայթյունից տուժած մեր հայրենակիցներին:

«Ստեփանակերտի հանրապետական բժշկական կենտրոն»-ից նախապատրաստում են պացիենտների տեղափոխումը»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐԸ ՈՒՇԱՑՐԵԼ Է

ՀՀ առողջապահության նախարարությունը Ստեփանակերտում բենզինի պահեստի պայթյունից չորս ժամ անց է միայն որոշել մտածել վիրավորներին Երեւան տեղափոխելու մասին:

Հայտնի է, որ ժամը յոթի սահմաններում վառելիքի պահեստում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով վիրավորների թիվն անցնում է 200-ը: Մեծամասնության առողջական վիճակը ծանր է կամ ծայրահեղ ծանր:

Եվ, ահա, Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանի կողմից երկու անգամ սանավիացիայի մասին հարցը բարձրաձայնելուց հետո միայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը հայտարարեց, թե ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները օդային եւ ցամաքային ճանապարհով տուժածների տեղափոխումն ապահովելու համար. ցավոք, գիշերային եւ եղանակային վատ պայմանները անհնար են դարձնում այս պահին տեղափոխումը:

Այսինքն՝ Անահիտ Ավանեսյանի գլխավորած կառույցը չորս ժամ սպասել եւ նոր միայն հասկացել է, որ չեն կարող վիրավորներին տեղափոխել: Իսկ ո՞ւր էին նրանք մինչեւ դա:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ՝ «ԳՄԲԵԹ 2»

ՈՄԱ ռազմահայրենասիրական հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ՝ կազմակերպվում է «Գմբեթ 2» նախագիծը, որի շրջանակներում սահմանային գոտում կառուցվելու են փայտահողային պաշտպանական կետեր: Մինչ այս եղել է «Գմբեթ 1»-ը, որի ընթացքում կառուցվել են երկարաժամկետ պաշտպանական կետեր: Պաշտպանության առաջին գծի սարքավորմամբ զբաղվում է պետությունը, իսկ երկրորդ գծի ամրապնդմամբ զբաղվում է ՈՄԱ-ն իր «Գմբեթ 1»-ով եւ «Գմբեթ 2»-ով: Այն կառույցները, որոնք պատրաստվում են դառնալ «Գմբեթ 2», արժեն 2 հազար 300 դոլար. 80 կրակակետ արդեն կառուցվել է, եւս 25-ը կառուցման փուլում է: Այս նախագիծն իրականացնելու համար անհրաժեշտ է 92 հազար դոլար, որը փորձում են հավաքել տարբեր միջոցներով՝ նվիրատվությունից մինչեւ մակուլատուրա թղթերի հանձնում, որից կուտակված գումարը ուղղվելու է այս ծրագրի ֆինանսավորմանը: Արցախում տեղի ունեցող իրավիճակից ելնելով՝ ավելացել են ՈՄԱ-ի «Գմբեթ 2»-ի աջակիցները՝ երգիչներ, բլոգերներ դերասաններ, ուսանողներ եւ պարզապես հասարակ մարդիկ, որոնք մտածում են պետության ամրության եւ ապահովության մասին: Համացանցում այս նախագծի վերաբերյալ հանդիպում ենք եւ՛ լավ, եւ՛ վատ կարծիքների: Շատերն ասում են, որ «Գմբեթ 2»-ի ժամանակը չէ, Արցախից մարդիկ են տեղահանվում, պետք է նրանց օգնել, տուն տալ, սնունդ, հագուստ: Այժմ, սակայն, ամրաշինական աշխատանքները ամենաանհրաժեշտն են Հայաստանի ապագայի համար: Հիմա, երբ Արցախը քայքայվում է, մեզ պետք են ամուր սահման եւ ուժեղ զինվոր, այնպես որ, պետք է աջակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, որքանով կարող ենք: Նշենք, որ ՈՄԱ-ի այս նախագիծը նոր չէ, այն վաղուց է եղել:

ՄԻՊ-Ն ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը Գորիսում եւ Կոռնիձորում հանդիպումներ է անցկացնում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետ:

Պաշտպանը տեղում իրականացնում է փաստահավաք աշխատանքներ, հավաքագրվում են մանրամասն տեղեկություններ: Մասնավորապես՝ Գորիս համայնքում տեղակայված գրանցման կետում բռնի տեղահանվածների հետ տեղի են ունեցել զրույցներ, ուսումնասիրվել են նրանց գրանցման եւ կացարանով ապահովման հետ կապված հարցերը: Բազմաթիվ հարցեր քննարկվել են իրավասու պետական մարմինների հետ, եւ տրվել են անհրաժեշտ լուծումներ:

Բռնի տեղահանված անձանց տրվել է նաեւ խորհրդատվություն՝ կապված իրավունքների պաշտպանության հետ: Անահիտ Մանասյանը պատրաստակամություն է հայտնել բարձրացված խնդիրներին իր մանդատի շրջանակերում լինել հետեւողական եւ այս համատեքստում նշել է, որ դրանք լինելու են ամենօրյա հատուկ ուշադրության ներքո. անհատական մոտեցում է ցուցաբերվելու յուրաքանչյուրի իրավունքների պատշաճ իրացմանը:

Բռնի տեղահանված անձինք Պաշտպանին ներկայացրել են իրենց բնակավայրում ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով ի հայտ եկած մարդու իրավունքների լրաջագույն խնդիրները:

Գորիսում տեղի է ունեցել նաեւ Պաշտպանի եւ Սյունիքի մարզպետի հանդիպումը: Ռոբերտ Ղուկասյանն Անահիտ Մանասյանին ներկայացրել է բռնի տեղահանվածներին ընդունելու առնչությամբ մարզում իրականացվող աշխատանքները: Պաշտպանը նշել է, որ այդ անձանց իրավունքների հետ կապված հարցերը գտնվում են իր անմիջական ուշադրության ներքո: Հանդիպում է անցկացվել նաեւ պետական այլ մարմինների ներկայացուցիչների հետ:

Նույն օրը Պաշտպանն այցելել է Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրի դաշտային հատվածում հիմնված Հումանիտար կայան: Անահիտ Մանասյանը ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ղեկավար Կավիտա Բելանիի հետ հետեւել է կարիքների գնահատման գործընթացին, զրուցել անձնակազմի, այդ թվում՝ բուժաշխատողների հետ:

Բռնի տեղահանվածների առնչությամբ փաստահավաք աշխատանքները շարունակվում են:

ՕՐԻՆԱԳԻԾ

ՍՄԻԹԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՆԱԽԱԳԻԾ

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի մարդու իրավունքների ենթահանձնաժողովի նախագահ, կոնգրեսական Քրիս Սմիթն օրինագիծ է ներկայացրել, որի նպատակն է կանխել Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի հայերի նկատմամբ հեսագա վայրագությունները եւ էթնիկ զտումները:

Սմիթի ներկայացրած օրինագիծը կոչվում է «Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտումների եւ վայրագությունների կանխարգելման 2023 թ. ակտ» եւ Պետքարտուղարությունից պահանջում է մանրակրկիտ ռազմավարություն մշակել՝ նպաստելու Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայերի համար տեւական խաղաղությանը եւ բարեկեցությանը: Օրինագծով առաջարկվում են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

-ԱՄՆ դիվանագետներ ուղարկել տարածաշրջան՝ իրավիճակը վերահսկելու եւ հետագա ոտնձգությունների մասին անհապաղ հայտնելու համար,

- 24-ժամյա տեսադիտարկում իրականացնել հայկական մշակութային վայրերում,

-մարդասիրական օգնություն տրամադրել շրջափակումից եւ Լեռնային Ղարաբաղի վրա վերջին հարձակումից տուժած հայերին,

-Լեռնային Ղարաբաղի շրջափակումն ու ԼՂ դեմ հարձակումը գլխավորած պաշտոնյաների նկատմամբ նոր պատժամիջոցներ կիրառել,

-օտարերկրյա ռազմական ֆինանսավորում տրամադրել ժողովրդավարական Հայաստանի ??Հանրապետությանը, որին այժմ սպառնում է Ադրբեջանը,

- դադարեցնել Ադրբեջանին ամերիկյան ռազմական օգնության տրամադրումը՝ չեղյալ հայտարարելով Ազատության աջակցության բանաձեւի 907-րդ ենթաբաժնից հրաժարվելու՝ նախագահի լիազորությունը:

«Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը լուրջ վտանգի տակ է... Ցավոք, նրանք ստիպված եղան զինաթափվել եւ իրենց անկախությունը հանձնել անողոք բռնապետին, որի կառավարությունը տարիների ընթացքում բազմիցս սարսափելի ոտնձգություններ է կատարել նրանց նկատմամբ, ցանկություն է հայտնել էթնիկ զտումներ իրականացնել նրանց դեմ եւ նույնիսկ նախաձեռնել է ցեղասպանություն՝ սովամահությամբ, շրջափակելով Լաչինի միջանցքը: Մենք պետք է աշխատենք նրանց հետ՝ապահովելու, որ անցումային շրջանում տեղի չունենան շարունակական վայրագություններ», - նշել է միջազգայնորեն ճանաչված իրավապաշտպան Քրիս Սմիթը:

Սմիթը վերջին ընթացքում Կոնգրեսում նախագահել է մի շարք լսումներ՝ նվիրված Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի ծանր վիճակին:

«Լեռնային Ղարաբաղում ապրող հայերը, ինչպես միշտ, բոլոր իրավունքներն ունեն՝ շարունակելու անվտանգ ապրել իրենց հինավուրց հայրենիքում: Իմ օրինագիծը որոշակի թեթեւացում կբերի եւ կխրախուսի Բայդենի վարչակազմին գործել հիմա՝ տարածաշրջանում անմեղ կյանքեր փրկելու համար», - ասել է Սմիթը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ Է ՕԳՆԵԼ ⇨

Ֆրանսիայի ԱԳ նախարար Կատրին Կոլոննան X-ի իր էջում գրառում է արել ու հայտնել, որ պատրաստ են հրատապ օգնության միջոցներ ուղարկել Լեռնային Ղարաբաղ:

«Լեռնային Ղարաբաղ. իմ բոլոր մտքերն այսօր երեկոյան վառելիքի պահեստի պայթյունից տուժածների հետ են: Ֆրանսիան պատրաստ է արտակարգ միջոցներ ուղարկել: Ադրբեջանը պետք է ապահովի մարդասիրական օգնության անհապաղ մուտքը»,- գրել է նա:

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵՑ

Ադրբեջանը պատրաստ է Կարմիր խաչին բժշկական միջանցք տրամադրել: Այս մասին սոցիալական ցանցի իր էջում գրել է Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը:

Ադրբեջանցի պաշտոնյան նշել է, որ Բաքվում որպես Ստեփանակերտի պայթյունից տուժածների՝ դեպի Հայաստան դուրսբերման ուղի են դիտարկում 2020 թվականից հետո կառուցված Շուշի-Ֆիզուլի ճանապարհը:

«Այժմ մենք աշխատում ենք բացառության կարգով Կարմիր խաչի միջազգային կոմիտեին բժշկական տարհանման եւ օգնություն ցուցաբերելու համար Գորիս-Կապան-Էյվազլի-Ֆիզուլի-Շուշի-Խանքենդի (Ստեփանակերտ) ճանապարհից օգտվելու իրավունք տրամադրելու ուղղությամբ»,- գրել է Հաջիեւը:

ՎՐԱՍՏԱՆԸ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է

Սոցիալական ցանցերի վրացական տիրույթում շրջանառվում են Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի վերջին ռազմական հարձակման հետեւանքով Հայաստան տեղափոխված հայերի՝ ՀՀ-ից դուրս այլ վայրեր հնարավոր վերաբնակեցման մտադրությունների վերաբերյալ կեղծ տեղեկություններ. հայտնել են Վրաստանում Հայաստանի դեսպանությունից:

«Վրաստանում ՀՀ դեսպանությունը հերքում է նմանօրինակ մտացածին ստահոդ լուրերը եւ դատապարտում դրանց տարածումն ու թեմայի էժանագին շահարկումները հատկապես Լեռնային Ղարաբաղի եւ հայ ժողովրդի համար այս ծանր պահին»,- ասված է դեսպանության Facebook-ի էջում:

ԿՔՆՆԱՐԿՎԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ

Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը կքննարկի Հռոմի կանոնադրությունը (Հռոմի ստատուտ) վավերացնելու հարցը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նախագիծն ընդգրկված է հանձնաժողովի՝ սեպտեմբերի 28-ի նիստի օրակարգում:

Նշենք, որ ավելի վաղ Սահմանադրական դատարանը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված, Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում ամրագրված պարտավորությունները:

Այս հանձնաժողովում դրական եզրակացություն ստանալուց հետո հարցը կքննարկվի արդեն լիագումար նիստում:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Ո՞Վ Է ԲԱԶԵՅԱՆԻ ԴԵՄ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏՎՈՂԸ

«Ժողովուրդ» օրաթերթին ուշագրավ մանրամասներ են հայտնի դարձել Երեւանի նախկին քաղաքապետ Ալբերտ Բազեյանի եւ «Խաչակիրներ ռազամահայրենասիրական» ՀԿ 7 անդամների կալանավորման գործընթացից:



«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ալբերտ Բազեյանի եւ կազմակերպության անդամների դեմ ԱԱԾ-ում ցուցմունք է տվել «Խաչակիրներ ռազամահայրենասիրական» ՀԿ անդամ Արմեն Հարությունյանը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նա դիմել է ԱԱԾ, հայտնել, որ խոսակցություններ է լսել, թե ինչպես են նախապատրաստվում սպառնալիքով զավթելու իշխանությունը: ԱԱԾ-ն սկսել է գործընթաց «Խաչակիրներ ռազամահայրենասիրական» ՀԿ անդամների գործողությունների մասով, ինչի արդյունքում էլ նրանք կալանավորված են:

Հիշեցնենք, որ Բազեյանի տուն գնացել է ԱԱԾ երկու մեքենա, որից հետո սկսել են տունը խուզարկել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ վերջինիս բնակարանից տարել են որսորդական զենքը, Վազգեն Սարգսյանի կողմից պարգեւատրած զենքը ու մեկ համակարգիչ: Այսքանով ամեն ինչ չի ավարտվում: Ալբերտ Բազեյանն ԱԱԾ-ում ասել է, որ ինքն այս պահից հացադուլ է հայտարարում, ու իր նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում, քանի որ ինքը պետք է Հանրապետության հրապարակի հանրահավաքին ելույթ ունենար:

Դեպքից հետո ԱԱԾ-ն հայտնեց որ «Խաչակիրներ ռազամահայրենասիրական» ՀԿ անդամները, ինչպես նաեւ Ալբերտ Բազեյանը եւ այլ անձինք, ունենալով հակաիշխանական հայացքներ, ՀՀ կառավարության անդամների եւ ղեկավարի նկատմամբ՝ գաղափարական թշնամանք, նախնական համաձայնության գալով միմյանց հետ, պայմանավորվածություններ են ձեռք բերել իրենց մոտ պահվող զենք-զինամթերքը որպես հանցագործության գործիք օգտագործելու միջոցով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու եղանակով եւ դրա սպառնալիքով զավթելու իշխանությունը, մասնավորապես՝ Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով տիրանալ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններին:

Հանցավոր խմբի անդամները ձեռք են բերել հեռահաղորդակցության սարքեր, հեռախոսային ու այլ կապը խլացնող սարքեր, հանցանքի կատարումը հեշտացնող միջոցներ եւ գործիքներ, ինչպես նաեւ դիտավորությամբ ստեղծել այլ պայմաններ՝ այդկերպ նախապատրաստվելով կատարել նախնական համաձայնությամբ, խմբի կազմում իշխանության յուրացում, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել սկսել իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը, նախապատրաստվող առանձնապես ծանր հանցագործությունը բացահայտվել եւ խափանվել է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

Նկատենք որ գործով բոլոր անդամները կալանավորված են, բացի վերոհիշյալ ՀԿ անդամ Արմեն Հարությունյանից, որը ցուցմունք է տվել բոլորի դեմ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԲԱԶԵՅԱՆԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Երեւանի նախկին քաղաքապետ Ալբերտ Բազեյանի պաշտպան Գեւորգ Մելիքյանը հայտնեց, որ դատարանը 2 ամսով կալանավորեց Ալբերտ Բազեյանին:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Երեւանի նախկին քաղաքապետ Ալբերտ Բազեյանին տարել են ԱԱԾ եւ բռնի կերպով իշխանության յուրացման համար ձերբակալել են:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Բազեյանի տուն գնացել է ԱԱԾ երկու մեքենա, որից հետո սկսել են տունը խուզարկել: Վերջինիս բնակարանից տարել են որսորդական զենքը, Վազգեն Սարգսյանի կողմից պարգեւատրած զենքը ու մեկ համակարգիչ: Այսքանով ամեն ինչ չի ավարտվում: Ալբերտ Բազեյանը ԱԱԾ-ում ասել է, որ ինքն այս պահից հացադուլ է հայտարարում, ու իր նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում, քանի որ ինքը պետք է այսօրվա հանրահավաքին ելույթ ունենար:

Հավելենք, որ խուզարկության ժամանակ անգամ Բազեյանի որդուն թույլ չեն տվել ներս մտնել: Հանցագործության մասին հաղորդում տալուց հետո նոր փաստաբաններին են թույլ տվել մտնել տուն:

ՎԻՃԵԼ ԵՆ, ԿՐԱԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ սպանություն է տեղի ունեցել Աշտարակում:

Մասնավորապես, երեկ՝գիշերը ժամը 6-ի սահմաններում, սարի վրա՝ վրանի մեջ, երկու հովիվ վիճել են, որի ժամանակ 1996 թվականին ծնված հովիվը վերցրել է որսորդական զենքը ու կրակել 58-ամյա տղամարդու ուղղությամբ:

Տղամարդը գլխի շրջանում ստացել է մահացու վիրավորում ու տեղում մահացել է: Դեպքի վայր են գնացել իրավապահները, ձերբակալել են 1995 թվականին ծնված տղային, որն իրավապահներին հայտնել է, որ կենցաղային հարցերի շուրջ են վիճել, որի ժամանակ իր ընկերը հնչեցրել է հայհոյանք, ինչի համար էլ նա վերցրել է զենքը ու սպանել 58-ամյա տղամարդուն:

ՏԵՂԱՓՈԽԵՑԻՆ ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆ

Վստրեչի կամրջից արցախցի կինը փորձել էր ցած նետվել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ինքնասպանության փորձ կատարած կնոջը տեղափոխել են «Նուբարաշեն» հոգեկան առողջության կենտրոն, իսկ նրա երեքամյա դստերը՝ ՀՕՖ-ի երեխաների պաշտպանության կենտրոն:

Քննությամբ պարզվել է որ կինը հեգաբանական լուրջ խնդիրների առաջ է, ու նրան պետք է կոնտրոնի հսկողողության տակ պահել:

Հիշեցնենք, որ դեպքը գրանցվել էր սեպտեմբերի 25-ին: Ժամը 11:20-ի սահմաններում Հայաստանի Հանրապետության ՆԳՆ փրկարար ծառայության 911 Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ էր ստացվել, որ ժողովրդին հայտնի «Վստրեչի» կամրջից մի կին, երեխային գրկած, սպառնում է ցած նետվել: Կինը հայտնել էր, որ ինքն Արցախի Հանրապետության քաղաքացի է ու անարդարության զոհ է դարձել. այլեւս չի ուզում ապրել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ԳՈՐԾԸՆԹԱՑ ԵՆ ՍԿՍԵԼ

Փաստաբան Վահան Հովհաննիսյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց, որ փաստաբանների կողմից բազում դատապարտող հայտարարություններ են տարածվում վերջին օրերին տեղի ունեցող անօրինականությունների վերաբերյալ:

«Կարծում եմ, որ հայտարարությունները, ելույթները, ասուլիները, ֆեյսբուքյան ստատուսներն ու «լայվերը» բավարար միջոցներ չեն տոտալ անօրինականության դեմ պայքարելու համար: Անհրաժեշտ է արձանագրել հետեւյալ անառարկելի իրողությունները՝

1. դատավարական գործընթացների հիմքում դրված ապացույցներն արհեստական եւ շինծու են, հետեւաբար՝
2. դատավարական բոլոր գործընթացներն ի սկզբանե անօրինական են,
3. անօրինական գործընթացների միակ քաղաքական նպատակը անհնազանդներին արգելանքի տակ պահելն է,
4. փաստաբանները, մասնակցելով այդ անօրինական գործընթացներին, ԼԵԳԻՏԻՄԱՑՆՈՒՄ են դրանք:

Եվ հիմա ի՞նչ եմ առաջարկում.

Շտապ հավաքվել եւ միասնական որոշում կայացնել այդ գործերով մեր մասնակցության վերաբերյալ:

Ես ունեմ իմ անձնական կարծիքը, սակայն մարտավարական առումով այն չեմ հրապարակում: Հավաքվե՛ք՝խոսենք, այսպես շարունակվել չի կարող:

Հ.Գ. Կոչս վերաբերում է նաեւ բոլոր այն գործընկերներիս, ում չեմ հիշել եւ չեմ նշել»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԴԻ

Սեպտեմբերի 25-ին հրազենի գործադրմամբ սպանություն է տեղի ունեցել Արագածոտնի մարզում: Ժամը 18:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունում եւ Ոստիկանության Աշտարակի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ «Ամբերդ» ամրոցի մոտ սպանություն է տեղի ունեցել:

Արդեն տեղում՝ որպես արոտավայր օգտագործվող տարածքում տեղադրված պոլիէթիլենային սավաններով պատրաստված տնակում տեղադրված մահճակալին, գլխի մասը ամբողջովին ջախջախված, հայտնաբերել են տղամարդու դի: Տեղում ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ մահացածը 58-ամյա Արթուր Թ.-ն է: Մինչ դատաբժիշկը դեպքի վայրում կաշխատեր, ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության քրեական հետախուզության բաժնի եւ ոստիկանության Աշտարակի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները ստացված օպերատիվ տվյալներով, սպանությունը կատարելու համար ծագած հիմնավոր կասկածանքով, Օրգով գյուղի սարերից մեկում հայտնաբերում են կասկածյալին՝ Կոտայքի մարզի բնակիչ 57-ամյա Վարուժան Գ.-ին: Դեպքի վայրում քննիչները հայտնաբերում են հանցագործության գործիք որսորդական հրացանը եւ կրակված 1 պարկուճ՝ վրանի մեջ, իսկ 1 պարկուճն էլ հայտնաբերվում է հրացանի մեջ: Դեպքի փաստով Արագածոտնի մարզային քննչական վարչությունում սպանության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Կասկածյալը ոստիկանության Աշտարակի բաժնից ներկայացվել է Արագածոտնի մարզային քննչական վարչություն, որտեղ, քննիչի որոշմամբ, ձերբակալվել է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 25-ից 26-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 46 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐՔ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ՝ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

Դիլիջանի համայնքապետարանի շենքի հարեւանությամբ՝ ոստիկանության Դիլիջանի բաժանմունքի դիմաց՝ «Ծիրան», «Նյու Սիթի» հանրախանութների, կենտրոնական դեղատան, «VivaCell»-ի գրասենյակի հատվածում, ՀՀ ոստիկանությունը դարձրել է «Տուգանային հրապարակ»՝ վթարներից ջարդված մեքենաներով, նաեւ կենտրոնական ճանապարհին երկկողմանի կայանած բազում ավտոմեքենաները խոչընդոտում են երթեւեկությանը: Դիլիջան քաղաքի կենտրոնական հատվածում՝ ASHB բանկի դիմաց, ոմն Մակարյան սեփականատեր (ոչ պաշտոնական տվյալներով), անտեսելով Գեոդեզիայի ազգային ինստիտուտի մասնագետների խորհուրդը եւ հետազոտության արդյունքները, հողային աշխատանքներ է իրականացրել եւ շարունակում է իրականացնել, որի հետեւանքով խաթարվել է երթեւեկությունը, ստեղծել է վթարային իրավիճակ: Դիլիջան քաղաքի Վասիլեւ եւ Կամոյի փողոցները կապող կամուրջը, որը գտնվում է նախկին տպարանի շենքի դիմաց, գտնվում է վթարային վիճակում, կամրջի հենապատը փլվել է, կա կամրջի ամբողջովին փլուզման վտանգ: 2021թ. փետրվարի 26-ին, վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված, նույն թվականի հոկտեմբերի 17-ին կայացած Դիլիջան համայնքի ավագանու ընտրություններով ձեւավորված ավագանու կողմից Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար ընտրված Դավիթ Սարգսյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով, թե Դիլիջանի համաքապետարանը երբ է լուծելու վերոհիշյալ՝ Դիլիջան քաղաքի համար կարեւոր հիմնախնդիրները: Թեեւ հարցումից գրեթե 20 օր է անցել, սակայն համայնքապետարանը չի պատասխանել օրաթերթի հարցադրումներին:

ԱՆՏԵՂՅԱԿ ՄԱՐՔՊԵՏԸ

Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները 2023 թվականի օգոստոսի 25-ի դրությամբ իրենց աշխատանքում, չգիտեմ, թե ինչ նվաճումների համար ՀՀ պետական բյուջեից ավելի 50 միլիոն դրամ պարգեւավճարներ են ստացել, սակայն 3 տարի առաջ տեղի ունեցած պատերազմում Տավուշի մարզից զոհերի, վիրավորների, անհետ կորածների թիվը մարզպետարանում չգիտեն: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե 2020 թվականի 44-օրյա պատերազմում Տավուշի մարզի քանի բնակիչ է զոհվել, վիրավորվել, անհետ կորել: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «2020թ. սեպտեմբերյան պատերազմում զոհված, անհետ կորած, վիրավորված զինծառայողների մասով ՀՀ Տավուշի մարզպետարանին հաշվառում իրականացնելու գործառույթ վերապահված չէ: Առաջարկում ենք դիմել համապատասխան լիազոր մարմին»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԾՐԱԳՐԵՐ

ՀԱՄԱՆԵԼԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ ԿԳՄՄՆ-ից հայտնում են, որ նախատեսվում է մոտ ժամանակներս մեկնարկել ջանքերը եւ առավել արդյունավետ դարձնել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների կրթության կազմակերպումը: Այդ նպատակով տեղի է ունեցել հանդիպում կրթական ոլորտի ներկայացուցիչների միջեւ:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից, արդեն իրականացվում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների կարիքների գնահատում, եւ միջգերատեսչական համագործակցության արդյունքում վերհանված խնդիրներին տրվելու են համապարփակ լուծումներ:

«Մենք պետք է հետեւողական լինենք, որ բռնի տեղահանված երեխաները դուրս չմնան ուսումնական գործընթացից եւ իրացնեն կրթություն ստանալու իրենց իրավունքը: Բոլորս ակտիվ ներգրավված պետք է լինենք այս աշխատանքներում եւ իրազեկված՝ ինչ խնդիրների են նրանք բախվում»,- ասել նախարարը՝ անդրադառնալով նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների աջակցության խնդրին:

Նրա խոսքով՝ 44-օրյա պատերազմից հետո Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տարածքային մարմինների ներկայացուցիչները պարբերաբար այցելում էին նմանօրինակ ընտանիքներին՝ հասկանալու, թե վերոնշյալ երեխաներն ինչպիսի աջակցության կարիք ունեն, փորձում էին լուծումներ գտնել:

Հաշվի առնելով մեր երկրում ստեղծված իրադրությունը՝ ԿԳՄՄՆ-ն շրջաբերական գրություն է ուղարկել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարներին եւ առաջարկել իրենց ջանքերն ուղղել բռնի տեղահանված մեր հայրենակիցների օգնության կազմակերպմանը. «Առաջարկվել է դիտարկել բուհերի ուսանողներին եւ աշխատակիցներին ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից ձեւավորված կամավորների շտեմարաններում ընդգրկելու հնարավորությունը: Ուսանողները կարող են ներգրավվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին անհրաժեշտ սոցիալական աջակցության տրամադրման համար իրականացվող գործընթացներում՝ սկսած մարդկանց կարիքների գույքագրումից, անհրաժեշտ տեղեկատվական եւ այլ կարգի աջակցությունից մինչեւ մասնագիտական աշխատանքներ»:

Նաեւ առաջարկվել է համատեղ ջանքերով ստեղծել հարթակ, որի միջոցով ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչները, մարզիչները, մշակույթի բնագավառի մասնագետները հնարավորություն կունենան տեղեկանալու մասնագիտական թափուր աշխատանքների մասին: Մասնավորապես՝ դպրոցներում առկա ուսուցիչների թափուր աշխատատեղերի բոլոր հայտարարությունները հրապարակված են ԿԳՄՄ նախարարության կայքում:

Պետք է ընդգծել նաեւ հոգեբանական աջակցության ծրագրեր իրականացնելու կարեւորությունը, քանի որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցները, հատկապես՝ երեխաները, այս պահին ամենաշատը դրանց կարիքն ունեն:

Հանդիպման մասնակիցները ներկայացրել են ծրագրեր, որոնք տարաբնույթ են՝ կարիքների գնահատում, խնամք, հոգեբանական աջակցություն, ոչ ֆորմալ կրթական նախաձեռնություններ, արտադասարանական խմբակներ, կրթամշակութային նախագծեր, աջակցություն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչներին եւ այլն:

ԱՐՏԱՔԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հրավերով՝ աշխատանքային այցի շրջանակներում Նախիջանի Ինքնավար Հանրապետությունում է գտնվում Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Նախագահները հանդիպում են ունեցել Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության Գերագույն ժողովում, որից հետո նրանց ներկայությամբ տեղի է ունեցել երկու երկրների միջեւ տարբեր ոլորտներում համաձայնագրերի ստորագրման արարողությունը:

Ստորագրվել է 3 համաձայնագիր, որից մեկը վերաբերում է «Թուրքիայի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ Կարս-Նախիջեւան երկաթուղու նախագծին»:

Այցի շրջանակներում Նախիջեւանում է գտնվում նաեւ Թուրքիայի շրջակա միջավայրի, քաղաքաշինության եւ կլիմայի փոփոխության նախարար Մեհմեդ Օժասեկը, որն Ադրբեջանի քաղաքաշինության եւ ճարտարապետության պետական կոմիտեի նախագահ Անար Գուլիեւի հետ ստորագրել է «Թուրքիայի Հանրապետության կառավարության եւ Ադրբեջանի Հանրապետության կառավարության միջեւ Թուրքիայի Քահրամանմարաշ (պատմ.՝ Մարաշ) նահանգում բնակելի շենքերի, մանկապարտեզների, հիմնական դպրոցների եւ մշակութային կենտրոնի կառուցման վերաբերյալ համագործակցության համաձայնագիր»:

ԷՐԴՈՂԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

Նախիջեւանի եւ Ադրբեջանի այլ շրջանների հետ ցամաքային եւ երկաթուղային ուղիղ կապերի հաստատումն ավելի կամրապնդի մեր հարաբերությունները: Այս մասին Նախիջեւանից վերադառնալիս լրագրողների հետ զրույցում հայտարարել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը. հաղորդում են լրատվամիջոցները:

«Մենք բոլոր ջանքերը կգործադրենք այս միջանցքը (Զանգեզուրի միջանցք) հնարավորինս արագ բացելու համար: Թուրքիայի եւ Ադրբեջանի համար շատ կարեւոր այս միջանցքի իրականացումը ռազմավարական բնույթ է կրում եւ պետք է ավարտին հասցվի:

Երբ այս միջանցքը բացվի, Բաքվից մեկնող մեքենաներն ու գնացքներն անմիջապես կհասնեն Կարս: Թուրք-ադրբեջանական եղբայրությունն էլ ավելի կամրապնդվի: Ուրախալի է, որ այս առումով դրական ազդակներ են գալիս նաեւ Իրանից»,- ասել է Էրդողանը:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Նախիջեւանից վերադառնալիս լրագրողների հետ զրույցում նշել է. «Մենք Հայաստանից ակնկալում ենք ոչ թե հետաձգել գործընթացը, այլ ամուր կամք դրսեւորել: Այս ակնկալիքի մասին ես ասել եմ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին սեպտեմբերի 11-ին կայացած հեռախոսազրույցի ժամանակ»:

Նախագահը նաեւ խոսել է հնարավոր քայլերի մասին, որոնք ուղղված են լինելու Զանգեզուրի միջանցքի բացմանը: «Մենք չենք տեսնում որեւէ խնդիր, որը չի լուծվի՝ հարգելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը եւ բարիդրացիության իրավունքը: Ադրբեջանահայկական գործընթացում առաջընթացի ապահովումը մեծապես կնպաստի տարածաշրջանի կարգավորմանը: Մենք կշարունակենք աշխատել միասին՝ Ադրբեջանի հետ Հարավային Կովկասում կայունություն, խաղաղություն եւ բարգավաճում հաստատելու համար»,- նշել է Էրդողանը:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՐՑԱԽ

ԱՊԱՀՈՎԵԼ ԵՆ ԿԵՑԱՎԱՅՐՈՎ

Լեռնային Ղարաբաղի ժողովրդին աջակցելու նպատակով ստեղծված աշխատանքային խումբը երեք օրերի ընթացքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ավելի քան 2500 անձի ապահովել է կեցավայրով. «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ սեպտեմբերի 26-ին՝ հումանիտար կենտրոնում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ, այս մասին ասաց փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը:

Նրա խոսքով՝ աշխատանքային խումբը նախապես գույքագրել էր Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում գտնվող հյուրատները եւ հյուրանոցները, որտեղ մարդկանց առաջին իսկ դիմումով կարող են մարդկանց տեղավորել:

«Մենք այս երեք օրերի ընթացքում արդեն իսկ 2500-ից ավելի անձանց կեցավայրով ենք ապահովել: Նրանցից մոտ հազարը տեղակայված են Սյունիքի տարբեր հյուրատներում եւ հյուրանոցներում, 500-ը՝ Վայքում, մոտ 500-ը՝ Գեղարքունիքի մարզում: Եվ այս ժամերի ընթացքում շարունակվում է Տավուշի տարբեր հյուրատներում եւ հյուրանոցներում մարդկանց տեղակայումը: Շարունակելու ենք այդպես շարժվել առաջ»,- ասաց Խաչատրյանը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՐԻՔՆԵՐ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց բուժօգնության տրամադրման գործընթացում այս պահին լրացուցիչ մասնագիտական ներուժի ներգրավման, ինչպես նաեւ դեղերի եւ բժշկական այլ պարագաների հավաքագրման, սեփական նախաձեռնություններով հանդես գալու անհրաժեշտություն չկա:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարություն է տարածել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը:

«Միաժամանակ, հաշվի առնելով բուժաշխատողների կողմից մեծ դիմելությունն ու պատրաստակամությունը՝ ամբուլատոր բժշկական օգնություն իրականացնող թերապեւտները, մանկաբույժները, ընտանեկան բժիշկները, հոգեբանները, այլ նեղ մասնագետներն ու բուժքույրերը կարող են դիմել Առողջապահության նախարարություն»,- ասված է հայտարարության մեջ:

Ցանկացողները կարող են էլեկտրոնային նամակներ ուղարկել՝ նշելով անուն, ազգանուն, մասնագիտացում, կոնտակտային տվյալներ:

Մասնագետների հայտագրումից հետո, ըստ կարիքի, նախարարությունից նրանց հետ կապ կհաստատեն:

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ԱՄՆ-Ի ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ

Վերջին 9 ամսվա ընթացքում, երբ Լաչինի ճանապարհը շրջափակված էր Ադրբեջանի իշխանությունների կողմից, ԼՂ-ում հումանիտար ծանր իրավիճակ ձեւավորվեց. սննդի, դեղորայքի, էական նշանակության ապրանքների լուրջ պակաս կար Լեռնային Ղարաբաղում: Այս մասին երեկ՝ սեպտեմբերի 26-ին, Կոռնիձորում լրագրողների հետ զրույցում նշեց ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ղեկավար Սամանթա Փաուերը:

Նրա խոսքով՝ Ադրբեջանի իշխանություններն այդ ընթացքում թույլ չեն տվել հումանիտար միջազգային կազմակերպություններին մուտք գործել Լեռնային Ղարաբաղ եւ օգնություն տրամադրել այնտեղի բնակչությանը:

«Նախորդ շաբաթվա ընթացքում ռազմական գործողությունները ծանր իրավիճակը դարձրեցին առավել վատթար: Հումանիտար կազմակերպությունները պետք է մուտք ունենան ԼՂ բնակավայրեր: Նախագահ Բայդենի հանձնարարականով՝ ես այստեղ եմ եկել՝ զրուցելու ՀՀ իշխանությունների հետ, ամենակարեւորը՝ քաղաքացիական անձանց հետ, որոնք ԼՂ-ից դուրս են գալիս: Ծանր է տեսնել, լսել այն ամենը, ինչի մշով անցնում են այս ընտանիքները: Շատերը հեռացել են իրենց բնակավայրերից հրետակոծության ներքո: Շատերը թերսնված են հասել այստեղ: Կարծում եմ՝ բոլորդ տեսնում եք այն տրավման, հոգնածությունը, որ կա մարդկանց դեմքերին: Բացարձակ եւ կարեւորագույն անհրաժեշտություն է, որ միջազգային դիտորդները, հումանիտար կազմակերպությունները հասնեն եւ աջակցություն ցուցաբերեն ԼՂ ժողովրդին հենց տեղում:

Մենք գիտենք, որ վիրավոր քաղաքացիական անձինք կան ԼՂ-ում, որոնք տարհանման կարիք ունեն, եւ անհրաժեշտ է, որ նրանց տարհանումը կազմակերպվի Ադրբեջանի իշխանությունների կողմից»,-ասաց նա:

Փաուերը տեղեկացրեց, որ ԱՄՆ կառավարությունը մարդասիրական օգնության համար հատկացնում է 11,5 մլն դոլար. «Այս միջոցներով կապահովեն սննդամթերքից սկսած մինչեւ սոցիալ-հոգեբանական աջակցություն»:

Հիշեցնենք, որ Ադրբեջանը սեպտեմբերի 19-ից ԼՂ-ի դեմ լայնածավալ հարձակում էր սկսել՝ թիրախավորելով նաեւ քաղաքացիական ենթակառուցվածքներ, խաղաղ բնակիչներին: Հայկական կողմը, այս պահի տվյալներով, ունի առնվազն 200 զոհ եւ ավելի քան 400 վիրավոր: Նրանց թվում նաեւ քաղաքացիական անձինք են:

Սեպտեմբերի 20-ին ԼՂ իշխանություններն ընդունեցին ռուսական խաղաղապահ առաքելություն իրականացնող զորակազմի հրամանատարության առաջարկությունը՝ կրակի դադարեցման վերաբերյալ: Սեպտեմբերի 21-ին Եվլախում կայացավ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների հանդիպումը, երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ սեպտեմբերի 25-ին Իվանյանում (Խոջալու):

Սեպտեմբերի 24-ին հայտարարվեց, որ ՌԴ խաղաղապահների ուղեկցությամբ Հայաստան կիրականացվի այն ընտանիքների տեղափոխումը, որոնք վերջին ռազմական գործողությունների հետեւանքով մնացել են անօթեւան եւ հանրապետությունից դուրս գալու ցանկություն են հայտնել:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԱՆԴՐԱԴԱՐՁԱՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Նախիջեւանից վերադառնալիս լրագրողների հետ զրույցում անդրադարձել է Հայաստանի հետ հարաբերություններին:

«Մենք Հայաստանից ակնկալում ենք ոչ թե հետաձգել գործընթացը, այլ ամուր կամք դրսեւորել: Այս ակնկալիքի մասին ես ասել եմ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին սեպտեմբերի 11-ին կայացած հեռախոսազրույցի ժամանակ»,- նշել է նա:

Նախագահը նաեւ խոսել է հնարավոր քայլերի մասին, որոնք ուղղված են լինելու Զանգեզուրի միջանցքի բացմանը.

«Մենք չենք տեսնում որեւէ խնդիր, որը չի լուծվի՝ հարգելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը եւ բարիդրացիության իրավունքը: Ադրբեջանա-հայկական գործընթացում առաջընթացի ապահովումը մեծապես կնպաստի տարածաշրջանի կարգավորմանը: Մենք կշարունակենք աշխատել միասին՝Ադրբեջանի հետ Հարավային Կովկասում կայունություն, խաղաղություն եւ բարգավաճում հաստատելու համար»,- նշել է Էրդողանը:

ՊԵՍԿՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանից անուղղակի սուբսիդիաները զգալի ներդրում են Հայաստանի զարգացման գործում, ուստի Մոսկվայի, Վաշինգտոնի եւ Երեւանի հարաբերությունների աստիճանը չարժե համեմատել: Այս մասին լրագրողներին ասաց ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը՝ մեկնաբանելով ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի նամակը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

«Եթե խոսվում է էներգետիկայի ոլորտում համագործակցության մասին, ապա, իհարկե, դժվար թե այստեղ ինչ-որ բան համեմատվի Ռուսաստանի տնտեսության հետ, ինտեգրման խորության հետ: Դժվար թե հնարավոր լինի համեմատել Հայաստանի տնտեսությանն անուղղակի սուբսիդավորմամբ: Վերջիվերջո, չմոռանանք, որ տարբեր բնական ռեսուրսների բավականին արտոնյալ մատակարարումները, Ռուսաստանի կողմից ցուցաբերվող օգնությունը շատ նշանակալի ներդրում է Հայաստանի եւ հայ ժողովրդի զարգացման գործում: Ռուսաստանը դա արել է, եւ եթե կամենաք, կշարունակենք անել, այնպես որ, իհարկե, դժվար թե հնարավոր լինի համեմատել մեր փոխգործակցության մակարդակը, եւ մեր ներգրավվածությունն այս փոխգործակցությանը կապված է ամերիկացիների ներգրավվածության հետ»,- ասել է Պեսկովը:

ՌԴ նախագահի մամուլի քարտուղարը նաեւ նշել է, որ Հայաստանն ու ԱՄՆ-ն ինքնիշխան երկրներ են, «եւ նրանք ունեն իրենց ուղղությունները, որոնցում զարգացնում են փոխգործակցությունն ու երկխոսությունը, իսկ մենք՝ մեր ուղղություններով»:

Նշենք, որ նախօրեին Երեւանում գտնվող ԱՄՆ ՄԶԳ ղեկավար Սամանթա Փաուերը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին է փոխանցել ԱՄՆ պետության ղեկավարի նամակը, որում Բայդենը, մասնավորապես, խոստանում է համագործակցություն էներգետիկայի ոլորտում, դիվերսիֆիկացում եւ անվտանգություն:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«ՔՈՉԱՐԻ» ՊԱՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական մշակույթը, դարերի պատմություն ունենալով, այժմ կանգնած է վտանգի առջեւ: Մի բանի օր է, ինչ հայկական «Քոչարի» պարը բուռն քննարկումների կիզակետում է հայտնվել հարեւան պետության կողմից:



«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է պարի ծագումնաբանությունը:

«Քոչարի» պարը ծնունդ է առել Արեւմտյան Հայաստանում: Քոչարի բառը ծագել է «քոչ-ղոչ-խոյ» տառադարձության արդյունքում:

«Քոչ» արմատը բացատրվում է մի քանի իմաստով՝

1. քոչ/գոչ - կոչ անել, իրար կանչել,
2. քոշ - արու այծ:

Խոյի պաշտամունքից է առաջացել այս մեծ մշակութային երեւույթը: Քոչարի պարը կապված է խոյահարող կենդանիների հետ, քանի որ պարային շարժումները համապատասխանում են խոյերի շարժումներին:

Ժամանակին մի շարք բնակավայրերում տղամարդ օծելու արարողության մի մաս էր կազմում «Քոչարի» պարը: Երբ տղամարդը մեծացել էր, եւ մորուքը սափրելու ժամանակն էր եկել, այրօծում են կատարել:

Կանչել են այդ տղամարդուն, խրատներ ու խորհուրդներ են տվել, համայնքի խնդիրներին են ծանոթացրել: Երբ հասկացել են, որ երիտասարդը կայացել է, եւ նրա վրա կարելի է հույս դնել, նրան ասել են. «Գնա՛, կանգնի՛ր շարք եւ պարի՛ր Քոչարի»:

Պարույր Սեւակը եւ մի շարք մտավորականներ 1868 թվականին «Սովետական արվեստ» խմբագրատանը բանավիճել են «Ո՞ւր է գնում հայկական պարարվեստը» թեմայի շուրջ:

Պարույր Սեւակն ասել է. «Հայկական եւ ադրբեջանական պարերը ոչ թե նման են իրար, այլ պարզապես երկվորյակներ են, որովհետեւ նրանցից եւ ոչ մեկը իրական ազգային չէ»:

Գագիկ Գինոսյանը մեզ հետ զրույցում նշեց. «Պիտի շատ պարել մեր ազգային պարերը եւ տարածել ու սերմանել սերունդների մեջ: Մեր մշակույթին պետք է տեր կանգնենք, որ հենց գողանալու փորձ լինի, այդ ժամանակ ասենք՝ գողացան: Ավելի շատ պիտի ուշադիր լինենք մեր մշակույթին եւ մշակույթի միջոցով մեր ինքնությանն ավելի ուշադիր դառնանք, արժանի լինենք այդ մշակույթին, կյանքի գնով փորձենք պահել մեր մշակույթը, որպեսզի մեզանից չտանեն:

Հույները եւս ունեն «Քոց արի» անվամբ պար: Հույն պատմագետներից մեկն ասել է.

«Հույները, չնայած ունեն «Քոց արի» պարը, միեւնույն ժամանակ պնդում են, որ դա ունի հայկական ծագում»»:

Խոսելով ազգային պարերից՝ Գագիկ Գինոսյանն անդրադարձավ «Թամզարա» պարին.

«Թամզարա պարը չի կարող համարվել ադրբեջանական, քանի որ այդ գյուղաքաղաքը գտնվում է Արեւմտյան Հայաստանում՝ Կարինի, Էրզրումի եւ Փոքր Հայքի սահմանագլխին: Ըստ Հրաչյա Աճառյանի՝ գյուղաքաղաքը կառուցել է Թովմա Արծրունին, այդ իսկ պատճառով կոչվել է իր անվամբ: Թամզարայում ի սկզբանե հայեր են ապրել, եւ ծիծաղելի կլինի, եթե դա չհամարվի հայկական»:

Ինչպես ասել է Կոմիտասը, «պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը, մանավանդ՝ բարքն ու քաղաքակրթության աստիճանը»:

ՍՊՈՐՏ

ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ



Ֆուտբոլի Հայաստանի հավաքականի նախկին ավագ, Իտալիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր Միլանի «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը սոցիալական ցանցերում արած կոչով դիմել է միջազգային հանրության առաջնորդներին:

«10 ամսվա շրջափակումից հետո՝ սեպտեմբերի 19-ին, ադրբեջանական զինված ուժերը դաժան հրետակոծության ենթարկեցին Լեռնային Ղարաբաղը: Սիրտս կոտրվում է, երբ իմանում եմ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված եւ Հայաստան զանգվածաբար փախչող հազարավոր հայ ընտանիքների ցավի, կորստի եւ մարդու իրավունքների կոպիտ խախտումների մասին:

Իրավիճակը, որն այժմ տառապանք է պատճառում մարդկանց Լեռնային Ղարաբաղում, հիշեցնում է պատմության ամենամութ ժամանակները: Մենք հաճախ ափսոսանքով հետ ենք նայում սպանությունների, էթնիկ զտումների եւ համակենտրոնացման ճամբարների մութ էջերին եւ զղջում, որ ոչ ոք բավարար ջանք չի գործադրել այդ ամենը վերացնելու համար:

Մենք չենք կարող հետ բերել անցյալի վայրագությունների զոհերին, բայց մենք դեռ ժամանակ ունենք կանխելու ցեղասպանությունը Լեռնային Ղարաբաղում:

Այս սարսափի մեջ անհրաժեշտ է հրատապ մարդասիրական օգնության մոբիլիզացիա Լաչինի միջանցքով եւ միջազգային դիտորդների տեղակայում մարդկության դեմ ուղղված հանցագործությունները դադարեցնելու համար:

Այժմ հրատապ է միջազգային առաջնորդների համար ոտքի կանգնել էթնիկ զտումների դեմ եւ օգտագործել բոլոր հնարավոր քաղաքական գործիքները տարածաշրջանում ռազմական գործողություններին վերջ դնելու համար:

Երեխաներն ունեն իրենց հայրենիքում խաղաղ ապրելու իրավունք»:

ՊԱՏՐԱՍՏ Է ԽԱՂԻՆ

Իսպանիայի փոխչեմպիոն Մադրիդի «Ռեալի» բրազիլացի հարձակվող Վինիսիուս Ժունիորը վերականգնվել է եւ մարզվել է իտալացի Կառլո Անչելոտիի գլխավորած թիմի ընդհանուր խմբում: Նա պատրաստ է առաջիկա հանդիպմանը. հաղորդում է Marca-ն:

Վինիսիուսը մնասվածքի պատճառով խաղադաշտ դուրս չի եկել օգոստոսի 25-ից: Անցած տուրում Արքայական թիմը 1:3 հաշվով պարտվել էր Մադրիդի «Աթլետիկոյին»:

Իսպանիայի առաջնության 7-րդ տուրում «Ռեալը» սեպտեմբերի 27-ին կընդունի «Լաս Պալմասին»:

ԳՐԱԴՌՈՒՄ

ՆԱԶԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Դերասանուհի Նազենի Հովհաննիսյանն «Ինստագրամ» սոցիալական ցանցի իր էջի Stories բաժնում նոր գրառում է կատարել:

«Հայաստանի Հանրապետությունը հինգ տարի է՝ ամբողջ ուժով գահավիժում է անդունդը: Բոլորին մեղադրում են, բացի երկրի «գլխավոր» գերագույնից, որի բոլոր որոշումները բերեցին հանգեցրին պատերազմի: Հանգեցրին հայրենազրկման, հանգեցրին ցեղասպանության, հանգեցրին բացարձակ ատելության իրար նկատմամբ, հանգեցրին բանտարկությունների, հերոսների հիշատակի պղծման, ոստիկանական երկրի վերածեցին, միայն բռնի ուժով իրենց ներքին քաղ. հարցերը լուծելու մղումից մոռացավ էն ժողովրդի պահանջը, որը ընտրել էր նրան՝ որպես երկրի գլուխ: Հիմա մեղադրում են բոլորին, բացի հակահայ, թշնամու համար աշխատող, հային չսիրող ու միայն թուրքի ու ռուսի շահը պաշտպանող ղեկավարից: Պահանջում եմ հրաժարական ՀՀ ներկայիս գործող կառավարության ու վարչապետի: Անմեղ հայերի սպանդը ձեր մեղքով է: Հազարավոր զինվորների թափած արյունը ձեր մեղքով է: ՀՀ-ի տարածքային ամբողջականության խախտումը ձեր մեղքով է: Արցախի հանձնումը ձեր ստորագրությամբ ու մեղքով է: Հայ ժողովրդին հինգ տարի անընդմեջ ցնցումների ենթարկելով տկարացնելն ու հուսահատեցնելը ձեր մեղքով է: Բանակի կոտրված վիճակը ձեր մեղքով է: Ժողովուրդն անընդհատ ինքնկազմակերպվում է՝ անելով բոլոր գործառույթները, որոնք պետք է աներ պետությունը, բայց քանի դեռ դուք եք երկրի ղեկին, մենք միայն կորցնում ենք, պարտվում, միայն մեռնում... Անընդհատ ու տարբեր մտածված վատությունների պատճառով Հայաստանն է հայաթափվում: Ես պահանջում եմ ներկա կառավարության եւ ՀՀ դե ֆակտո վարչապետի հրաժարականը: Ն. Փ.-ը Հայաստանի այս անվերջանալի անկման գլխավոր պատասխանատուն է ու պիտի հրաժարական տա: Մահերի ու ողբերգությունների էս ընթացքը պիտի կանգնի, քանի դեռ շնչում ենք գոնե...», - գրել է նա:

ԵՐԱԺՇՏԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Երաժիշտ Միքայել Ոսկանյանը ֆեյսբուքյան իր էջում նոր գրառում է կատարել, որում ասվում է.

«Դժոխքը տեսնել, զգալ, ապրել, մինչեւ հոգու խորքը ատել. էնքան ատել, որ ուժ տա. ուժեղանալ համբերատար, անձայն...., որ ապրենք:

Պետք է թշնամուն հետոյի վախով սնել..., որ հանգիստ չքնի, որ թմրի: Իսկ հիմա սիրտ չկա, երգ չկա»:

● *Սեպտեմբերի 28-ին Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Հրեշը՝լուսնի վրա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԼԻԶԻՆԳ

ՀԱՐՑ. Հնարավո՞ր է արդյոք լիզինգով ձեռք բերել նաեւ ագրոպարենային ոլորտի սարքավորումներ:

Իրինա Ժամհարյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 2018 թվականի հուլիսից մեկնարկել է «ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիրը, որի հիմնական նպատակը ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է: Լիզինգը տրամադրվում է դրամով մինչեւ 8 տարի ներառյալ մարման ժամկետով, տարեկան մինչեւ 11 տոկոս տոկոսադրույքով, որի մինչեւ 7 տոկոսային կետը սուբսիդավորում է, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 4 տոկոս, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի 11 տոկոսային կետով, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լիզինգառուն վճարում է լիզինգի առարկայի արժեքի 20 տոկոսի չափով կանխավճար: Ծրագրի շրջանակներում ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 450.0 մլն դրամը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է ուսուցիչը դիմել տարակարգ ստանալու համար:

Սմբատ Ալավերդյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2022 թ. փետրվարի 9-ի ՀՕ-35-Ն օրենքը ուժի մեջ է մտել 2022 թ. մարտի 3-ից, որով սահմանվել են փոփոխություններ նաեւ ուսուցիչների տարակարգի շնորհման գործընթացում:

Համաձայն վերոգրյալ օրենքի պահանջների՝մարտի 3-ից սկսած՝տարակարգի շնորհման գործընթացը կիրականացվի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից օրենքով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունելուց հետո, որով կսահմանվեն տարակարգի շնորհման համար ուսուցչի մասնագիտական չափանիշները:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է տարակարգի շնորհման համար դիմում ներկայացնել ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Կոռնիձորում տեղակայված հումանիտար կայանում եւ Գորիս քաղաքում շուրջօրյա գործում են առաջին բժշկական օգնություն կետեր, որտեղ ծառայություններ են մատուցում Գորիսի բժշկական կենտրոնի եւ Երեւանի պոլիկլինիկաներից գործուղված բժիշկները:

Բժիշկների կազմում կան նաեւ նեղ մասնագետներ (նյարդաբան, սրտաբան, ներզատաբան):

Տեղում շուրջօրյա հերթապահում են նաեւ շտապ բուժօգնության մեքենաները, որոնք, ըստ անհրաժեշտության, իրականացնում են հիվանդների տեղափոխում հիվանդանոցներ: Առաջին երկու օրվա ընթացքում ծառայություն է մատուցվել 725 քաղաքացու, որոնցից 355-ը՝ երեխա, եւ 22-ը՝ հղի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Գիշեր / Ցերեկ
Շիրակ	+2 +6 / +16 +20
Կոտայքի լեռներ	+2 +5 / +17 +21
Կոտայքի նախալեռներ	+10 +12 / +20 +22
Գեղարքունիք	+2 +7 / +16 +20
Լոռի	+4 +8 / +15 +19
Տավուշ	+6 +10 / +17 +22
Արագածոտնի լեռներ	+1 +4 / +15 +17
Արագածոտնի նախալեռներ	+8 +11 / +19 +23
Արարատ	+11 +13 / +23 +25
Արմավիր	+11 +14 / +21 +24
Վայոց ձորի լեռներ	+4 +8 / +14 +17
Վայոց ձորի նախալեռներ	+8 +11 / +25 +27
Սյունիքի հովիտներ	+11 +14 / +21 +24
Սյունիքի նախալեռներ	+4 +8 / +14 +17
ԼՂՀ	+9 +12 / +21 +25
Երեւան	+12 +14 / +21 +23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*